

## Մերգեյ Մարաբյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ,  
ՀՀ վճարելի դատարանի նախագահի խորհրդակցական*

### **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԶԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**(գործող օրենսդրության, դատական պրակտիկայի և զարգացման  
մասին իրավական վերլուծություն)**

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է, որին բնորոշ են իրավունքի գերակայությունը և կամայականության բացառումը. մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները համարվում են բարձրագույն արժեքներ, իսկ պետությունը, լինելով սահմանափակված այդ իրավունքներով ու ազատություններով, պարտավոր է ապահովել դրանց պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Հիմնական օրենքի մակարդակով նման դրույթներ ամրագրելով՝ պետությունը, փաստորեն, պարտավորվել է ապահովել յուրաքանչյուր անձի սոցիալական, տնտեսական, քաղաքացիական և այլ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Տնտեսական և քաղաքական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետությունում մեծանում է հատկապես անձի գույքային իրավունքների նշանակությունը, այդ թվում՝ տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի նշանակությունը (Սահմ. հոդված 20): Պետք է հատկապես հաշվի առնել, որ տուժողին պատճառված վնասի հատուցման իրավունքը առաջին անգամ բարձրացվեց սահմանադրական մակարդակի և ճանաչվեց որպես սահմանադրաիրավական ինստիտուտ<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Դիլբանդյան Ս.Ա., Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում, Երևան, 2011, էջ 211, Դիլբանդյան Ս.Ա., ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մաս, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. Եր.: «Ժրավունք», 2010, էջ 250:

Հանցագործությունից տուժողի գույքային իրավունքների պաշտպանությունն ունի սոցիալական հատուկ նշանակություն, քանի որ նախ՝ դրանք ամրագրված են միջազգային մի շարք իրավական ակտերով<sup>1</sup>, երկրորդ՝ շուկայական տնտեսության նոր պայմաններում դրանք ձեռք են բերում մրցունակություն անձի մնացած իրավունքների նկատմամբ: Դրա հետ կապված՝ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելը, դրա իրականացումն ապահովելու համար պայմաններ ստեղծելը, տուժողի խախտված իրավունքների վերականգնումը քրեական դատավարության շրջանակներում ձեռք են բերում հատուկ արդիականություն:

Հայրենական քրեադատավարական օրենսդրությամբ՝ հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման ավանդական ձևը քաղաքացիական հայցի ինստիտուտն է: Այն բնութագրվում է որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման բազային գործիք<sup>2</sup>, հանցագործությունից տուժողների խախտված գույքային և ոչ գույքային իրավունքների պաշտպանության ունիվերսալ միջոց<sup>3</sup>, որը, սակայն, քրեական դատավարությունում, ձևավորման պահից մինչ օրս, միանշանակ չի ընկալվում թե՛ իրավակիրառ պրակտիկայում, թե՛ քրեադատավարական իրավունքի տեսության մեջ: Դեռևս 19-րդ դարի վերջերին, խոսելով քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտի մասին, ցարական Ռուսաստանի իրավագետները նշում էին, որ այն քրեական դատավարության վիճահարույց և առավել քիչ մշակված մասերից մեկն է, որը դատական պրակտիկայում առաջացնում է մի շարք հիմնախնդիրներ<sup>4</sup>: Նախորդ դարի 60-70 ական թվականներին նույն հետևության են հանգել Ն.Ն.Պոլյանսկին՝ բնութագրելով քրեական դա-

---

<sup>1</sup> Տե՛ս ՄԱԿ-ի 1985 թվականի «Հանցագործության և իշխանության չարաշահման գոհերի արդարադատության հիմնական սկզբունքների մասին» հռչակագիրը, ԵՆՆԿ 1985 թվականի «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» N R (85) 11 հանձնարարականը, 1983 թվականի «Բռնությամբ կատարված հանցագործությունների գոհերին փոխհատուցելու մասին» Եվրոպական կոնվենցիան և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Золотая Е. А., Исковой способ защиты имущественных прав лиц, нарушенных преступлением: Автореф. дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 2006:

<sup>3</sup> Տե՛ս Имангазиева Ж.У., Проблемы гражданского иска в уголовном процессе: Автореф. дисс. канд. юрид. наук. Астана, 2008.

<sup>4</sup> Տե՛ս Кони А.Ф., Юридическая летопись, 1891, N 1, էջ 40, Тальберг Д.Г. Гражданский иск в уголовном деле или соединенный процесс, 1888, Киев.

տավարության գիտության զարգացումները<sup>1</sup>, և Վ.Գ.Դանը՝ քննարկելով 1961 թվականի ՌՍՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ քր. դատ. օր.) ամրագրված քաղաքացիական հայցի հիմնահարցերը<sup>2</sup>, և այլք: Թեև նորմատիվ կարգավորման տեսանկյունից քաղաքացիական հայցի ինստիտուտը գործող քր. դատ. օր.-ում դրական առաջընթաց է գրանցել 1961 թ. ՌՍՖՍՀ և ՀՍՍՀ քր. դատ. օր.-երի համեմատ, քանի որ առանձին գլուխ է նվիրվել քրեական դատավարությունում քաղաքացիական հայցին (գլուխ 20), սակայն կարող ենք հավաստել, որ սայլը տեղից չի շարժվել. մի շարք հարցերում այն նույնիսկ նահանջել է նախկին օրենսգրքերի համեմատ: Այլ կերպ ասած՝ քաղաքացիական հայցը շարունակում է մնալ քրեական դատավարության առավել քիչ մշակված և վիճահարույց մասերից մեկը:

Այստեղ նպատակ ունենք քննարկելու հայց հարուցելու հետ կապված որոշ հիմնախնդիրներ՝ մասնավորապես՝ **ա) երբ կարող է հարուցվել քաղաքացիական հայց քրեական դատավարությունում, բ) ինչ պետք է հասկանալ՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց հարուցել ասելով, գ) ինչ ձևով պետք է քաղաքացիական հայցը հարուցվի քրեական դատավարությունում:**

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 158-րդ հոդվածի 1-ին մասի՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ: Ընդ որում, հայց կարող է ներկայացվել հանցագործության մասին հաղորդման հետ միաժամանակ<sup>3</sup>:

Եթե հայց ներկայացնելու սկզբնական պահը քրեական գործ հարուցելու հետ կապելն ունի իրավաչափ բացատրություն, քանի որ դա պայմանավորված է քննության վաղ փուլում հանցագործությունից վնաս

---

<sup>1</sup> Ст'ю Полянский Н.Н., Очерк развития советской науки уголовного процесса. М., 1960, էջ 207.

<sup>2</sup> Ст'ю Даев В.Г., Современные проблемы гражданского иска в уголовном процессе. Л., 1972,

<sup>3</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստից հետևում է, որ քրեական գործ հարուցվելու դեպքում կարող է լուծվել նաև անձին քաղաքացիական հայցվոր ճանաչելու հարցը, եթե, իհարկե, առկա կլինեն բավարար հիմքեր այն մասին, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անձին պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս, և այդ անձը ներկայացրել է հայց:

կրած անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման անհրաժեշտությամբ, ավելին՝ դա բխում է հայցի օրգանական ամբողջականության հայեցակարգից, ապա նույնը չի կարելի ասել հայցը հարուցելու վերջնաժամկետի մասին: Այս առումով առաջանում են որոշակի գործնական և տեսական խնդիրներ:

Նախ՝ քաղաքացիական հայց հարուցելը մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը թույլատրելու օրենսդրական կարգավորման պարագայում հակասություն է առաջանում քր. դատ. օր.-ի 158-րդ և 334-րդ հոդվածների միջև: ՀՀ քր. դատ. օր.-ի 334-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ նախագահողը դատաքննությունը սկսում է՝ ամբաստանյալին նրան ներկայացված (...) **քաղաքացիական հայցի հիմքերը և չափը պարզաբանելով**: Եթե ելնենք այն հանգամանքից, որ հայցը կարող է հարուցվել նաև դատաքննության ընթացքում կամ ավարտին, ապա այս պահանջը կարող է երբևէ չիրականացվել, ուստի կարող ենք փաստել, որ այս նորմը կրում է դեկլարատիվ բնույթ: Մինչդեռ հայցադիմումը հրապարակելը կարևոր գործողություն է. դրանով ոչ միայն ընդգծվում են դատական քննության սահմանները, այլև հայցի հասցեատերերը հնարավորություն են ունենում հայտնելու իրենց դիրքորոշումը դրավերաբերյալ և այլն:

Երկրորդ՝ գործող իրավակարգավորումների պայմաններում (հայցը մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալու պահը հարուցելու դեպքում) կարող է խախտվել նաև կողմերի մրցակցության և հայցով պատասխանողի պաշտպանության իրավունքը, քանի որ այդ դեպքում պատասխանողը բավարար հնարավորություն և ժամանակ չի ունենում առարկելու ներկայացված հայցի դեմ և այլն<sup>1</sup>:

---

<sup>1</sup> ՄԻԵԳ-ը գտել է, որ «կողմերի հավասարության սկզբունքի՝ որպես արդար դատաքննության ավելի լայն գաղափարի հատկանիշների մեկի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ պետք է ողջամիտ հնարավորություն ունենա ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք մի կողմին մյուսի նկատմամբ չեն դնում անբարենպաստ դրության մեջ [...]» / *Foucher v. France*, ECtHR Judgment, 18 մարտի 1997թ., պարագրաֆ 34, *Bulut v. Austria*, ՄԻԵԳ- վճիռը, 22 փետրվարի 1996թ., պարագրաֆ 47/: Կողմերի հավասարության սկզբունքն ապահովում է, որ պաշտպանության կողմը մեղադրանքի կողմի հետ իր գործը նախապատրաստելու և ներկայացնելու հավասար՝ ողջամիտ հնարավորություն ունի: Դրա պահանջները ներառում են պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ՝ ներառյալ մեղադրանքի կողմից նյութական տեղեկությունների բացահայտումը և այլն/ *Foucher v. France*, ՄԻԵԳ-վճիռը, 18 մարտի 1997թ., պարագրաֆներ 35-36:

Ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտություն է առաջանում հայց ներկայացնելու վերջնաժամկետի պահը ենթարկել փոփոխության՝ կրճատելով այդ ժամկետը:

Այս առումով տեսության մեջ առկա են երկու մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն՝ հայցը պետք է ներկայացվի միայն նախաքննության փուլում, հակառակ դեպքում դժվարանում է հայցի հիմնավորումը, իսկ մեղադրյալը կամ քաղաքացիական պատասխանողը չեն կարողանում լավ պատրաստվել հայցին առարկելուն<sup>1</sup>: Բացի այդ, ըստ հեղինակների, դա նպաստում է քաղաքացիական հայցվորի ակտիվ մասնակցությանը նախաքննության փուլում, ինչն իր դրական ազդեցությունն է թողնում հայցի ապահովման համար միջոցներ ձեռնարկելու վրա<sup>2</sup>: Համաձայնվելով այն դատողությունների հետ, որ հայցվորը պետք է ակտիվ մասնակցություն ունենա մինչդատական վարույթում, քանի որ դա կլուծի վնասի չափի, հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու և այլ հարցեր, սկզբունքորեն ընդունելի է թվում երկրորդ մոտեցումը, այն է՝ հայց ներկայացնելու վերջնաժամկետը պետք է կապել կամ դատական նիստի նախապատրաստական մասի, կամ մինչև դատաքննությունը սկսելու պահի հետ<sup>3</sup>: Այս մոտեցման իրավաչափությունն այն է, որ հանցագործությունից տուժողներն իրենց պատճառված վնասի հատուցման իրավունքի մասին հաճախ տեղեկանում են դատարանի կողմից, ուստի եթե հայցի ներկայացման վերջնաժամկետը կապվի նախաքննության փուլի հետ, ապա սուբյեկտիվ գործոնով պայմանավորված՝ դա կարող է օբյեկտիվ խոչընդոտ հանդիսանալ հանցագործությամբ վնաս կրած անձանց գույքային շահերի պաշտպանության համար: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 100 գործից, որոնցում հայց էր հարուցվել, 59-ում հայցվորներին վնասի հատուցման համար հայց հարուցելու իրավունք դատարանի կողմից պարզաբանվել էր դատական քննության փուլում, որից հետո վերջիններս իրականացրել էին իրենց իրավունքը:

---

<sup>1</sup> Տե՛ս Гершман И., Некоторые процессуальные вопросы гражданского иска в уголовном деле // Сов. гос. и право. 1958/1. էջ 121:

<sup>2</sup> Տե՛ս Кравцова С. В., Уголовно-процессуальный статус гражданского истца и гражданского ответчика на стадии предварительного расследования (понятие, сущность и основания возникновения). Дисс. На соискание ученой степени кандидата юр. Наук. СПб., 2003, էջ 43-44:

<sup>3</sup> Տե՛ս Божьев В. П., Гражданский иск в уголовном процессе // Законность. 2004/7:

Կարծում ենք՝ հայը պետք է ներկայացվի մինչև դատաքննությունը սկսվելու պահը: Դա ոչ միայն կնպաստի ապացույցների հետազոտման գործընթացին, այլև կապահովի հայցից լիարժեք պաշտպանվելուն և մրցակցությանը քրեական դատավարությունում: Սակայն, բացառիկ դեպքերում հայց ներկայացնելու հնարավորություն կարելի է սահմանել մասնաճյուղի դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալու պահը՝ պայմանով, որ պետք է միտքը հետաձգվի, և պատասխանող կողմին ժամանակ և հնարավորություն տրվի պատրաստվելու հայցից պաշտպանվելուն՝ ընդհուպ ապահովելով գործի նյութերին ծանոթանալը: Բացառիկ կարող է համարվել, օրինակ, այն դեպքը, երբ հանցագործությունից վնաս կրած անձը քրեական գործով վարույթ է ներգրավվում դատական քննության փուլում (օրինակ՝ հիվանդանոցում ստացիոնար բուժում ստանալու պատճառով, կամ դատարանում է պարզվում, թե ով է վնաս կրած անձը և այլն), և տեղեկացվում է, որ նա իրավունք ունի քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի հատուցման մասին պահանջ ներկայացնել ամբաստանյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի դեմ և օգտվում է իր այդ իրավունքից:

ՀՀ քր. դատ. օր.-ի 60-րդ և 158-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի վերլուծությունից հետևում է, որ հայց հարուցելը հասկացվում է հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին կամ դատարան հայցադիմում ներկայացնելու իմաստով, որի հիման վրա վարույթն իրականացնող մարմինը պետք է նախևառաջ լուծի հայց հարուցող անձին հայցվոր ճանաչելու հարցը: Ընդ որում՝ հայցադիմումում պետք է նշվի, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես մաս խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին:

Կարծում ենք՝ օրենքում հայցադիմումի պարտադիր պահանջ սահմանելը (ընդ որում՝ պայմանով, որ եթե հայցադիմումը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա վարույթն իրականացնող մարմինը կարող է հրաժարվել հայցադիմումն ընդունելուց) իր ռեկվիզիտներով հանդերձ գործնականում մի շարք դժվարություններ է առաջացնում: Եթե հայցադիմումը չի համապատասխանում օրենքի պահանջներին, վարույթն իրականացնող մարմինը, հատկապես հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը չպետք է հնարավորություն ունենան հայցադիմումը ընդունելուց հրաժարվելու, քանի որ նրանց

խնդիրն այդ փուլում ընդամենը հայցվոր ճանաչելու հարցի լուծումն է, այլ ոչ թե հայցի վերջնական լուծումը: Հակառակ դեպքում ստացվում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը վնաս է կրել հանցագործությունից, վարույթն իրականացնող մարմիններին ներկայացնում է հայց, որպեսզի դրա հիման վրա ճանաչվի հայցվոր (այսինքն՝ անձը դատավարության սուբյեկտ դառնալու խնդրանք է ներկայացնում վարույթն իրականացնող մարմնին), իսկ քրեական վարույթն իրականացնող մարմինը, տեսնելով, որ կան բավարար հիմքեր նրան հայցվոր ճանաչելու համար, սակայն ձևական նկատառումներով պայմանավորված (ներկայացված հայցադիմումը չի համապատասխանում օրենքի պահանջներին) նրան մերժում են այդ խնդրանքը՝ հայցադիմումն ընդունելուց հրաժարվելով: Եթե հայցադիմումն ընդունելուց հրաժարվելու կանոնակարգումը քաղաքացիական դատավարությունում կիրառելի է, ապա նույնը չի կարելի ասել քրեական դատավարության մասին, քանի որ քրեական դատավարությունում առկա է նաև մինչդատական վարույթ, որում հայց հարուցողն առավելագույնը կարող է պահանջել, որ իրեն ճանաչեն հայցվոր, ներկայացնել միջնորդություն հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին, ինչպես նաև մասնակցել քրեական գործով ապացուցմանը և այլն: Իսկ այս փուլում հայց ներկայացրած անձին այդ հնարավորությունից զրկելը՝ ձևական նկատառումներով պայմանավորված, կարծում ենք, ոչնչով արդարացված չէ և սահմանափակում է ոչ միայն հանցագործությունից վնաս կրած անձանց արդարադատության մատչելիության իրավունքը, այլև վտանգում է հատուցում ստանալը:

Անկախ այն բանից, թե հայցադիմումը որ մարմին է ներկայացվում, այն պետք է հասցեագրված լինի դատարանին (թեև օրենքը չի կարգավորում այդ հարցը, ինչը, մեր կարծիքով, օրենքի բացերից է), այլ ոչ թե հետաքննության մարմնին, քննիչին և դատախազին՝ նկատի ունենալով, որ հայցը լուծում է դատարանը: Դա նշանակում է, որ հայցադիմումն ընդունելուց հրաժարվելու մասին որոշում կարող է կայացնել միայն դատարանը՝ որպես արդարադատություն իրականացնող բացառիկ մարմին, այլ ոչ թե հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը: Գործող իրավակարգավորումներին համապատասխան՝ հիշյալ մարմիններին, փաստորեն, վերապահվել է դատական գործառնության իրականացում, ինչն անթույլատրելի է Սահմանադրության տեսանկյունից:

Ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտ է քր. դատ. օր.-ից բացառել հայ-ցաղիմունն ընդունելուց հրաժարվելու ինստիտուտը հատկապես մինչդատական վարույթում:

Անհրաժեշտ է նկատել, որ իրավակիրառ պրակտիկայում նկատվում է «հայցաղիմումից» հրաժարվելու կայուն միտում:

Գատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, որպես կանոն, դատարանների կողմից հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին որոշումներ են կայացվում հայցաղիմումի բացակայության պայմաններում: Գատարանների կողմից վնասի հատուցման մասին որոշում կայացնելու համար հիմք է ընդունվում տուժողի մինչդատական վարույթում կամ դատական քննության ընացքում արված բանավոր հայտարարությունը<sup>1</sup>, որը, փաստորեն, դիտվում է որպես հայցի հարուցում<sup>2</sup>: Առավել տարածված պրակտիկայի համաձայն՝ հայցաղիմումի փոխարեն տուժողների կողմից քննիչի անունով դիմում է ներկայացվում հայցվոր ճանաչելու խնդրանքով, իսկ վերջիններս էլ դրա հիման վրա որոշում են կայացնում անձին քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին: Այսպես, ԵԲԲԴ-0630/01/08 գործով Գ.Մ.-ն քաղաքացիական հայցվոր է ճանաչվել իր դիմումի համաձայն, որում մասնավորապես նշված է՝ **«Մալաթիա քննչական բաժնի քննիչ Ա.Բ.-ին, ... Գ.Մ.-ից դիմում՝ ես՝ որպես սույն քրեական գործով տուժող Գ.Մ.-ու, դիմում եմ Ձեզ խնդրանքով, որպեսզի 2008թ. օգոստոսի 2-ին ին-**

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի դատավճիռը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի արխիվում:

<sup>2</sup> Կարևոր է նշել, որ առանց օրենքով սահմանված կարգով ներկայացված հայցաղիմումի՝ հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման մասին որոշումներ կայացնելու դեպքեր արձանագրված են եղել նաև ՀՀ ԴՆԽ-ի կողմից 2006 թ. կատարված դատական պրակտիկայի ուսումնասիրությունների ժամանակ, որի կապակցությամբ ԴՆԽ-ն իր 2006 թվականի հունիսի 13-ի թիվ 100 որոշմամբ դատարաններին պարզաբանել է, որ «... 2. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը կարող է քննության առնվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան ներկայացված հայցաղիմումի առկայության դեպքում, բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածով նախատեսված բացառիկ դեպքերի: 3. Քաղաքացիական հայցը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանեցնելու դեպքում, դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն, կայացնում է որոշում հայցաղիմունն ընդունելուց հրաժարվելու մասին»: Սակայն առայսօր այդ պրակտիկան շարունակվում է:



**ճանից հափշտակված 35.000 ՀՀ դրամի չափով, ինձ ճանաչեք որպես քաղաքացիական հայցվոր»:**

Հավելենք, որ դատարանները պատճառված վնասի հատուցման հարցը հաճախ քննարկման առարկա չեն դարձնում այն պատճառաբանությամբ, որ թեև մինչդատական վարույթում անձը ճանաչվել է հայցվոր, սակայն դատարանին պատշաճ կազմված հայցադիմում չի ներկայացրել<sup>1</sup>:

Կարծում ենք՝ ձևավորված իրավակիրառ պրակտիկան սուբյեկտիվ գործոնի հետևանք չէ, այլ ունի օբյեկտիվ պատճառներ:

Նախ՝ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածում սահմանված է, որ անձը կարող է վարույթն իրականացնող մարմնին պահանջ (ոչ թե հայց) ներկայացնել իրեն քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին՝ առանց որոշակիացնելու պահանջի ձևը և բովանդակությունը, ինչը փաստացի տեղի է ունենում պրակտիկայում: Սակայն օրենքը, նշելով, որ հայցվոր ճանաչելու համար հայց է ներկայացվում, չի սահմանում «պահանջ ներկայացնելու» և «հայց ներկայացնելու» հասկացությունների հարաբերակցության հարցը:

Երկրորդ՝ դա պայմանավորված է նրանով, որ օրենքի պահանջներին խսիտ համապատասխան հայցադիմում կազմելը քաղաքացիների համար բավականին դժվար է, գրեթե անհնար. դրա համար անհրաժեշտ են որոշակի իրավաբանական գիտելիքներ: Ավելին, քննության սկզբնական փուլում, որպես կանոն, հստակ պարզված չեն լինում ինչպես վնասի չափը, այնպես էլ մեղադրյալը կամ քաղաքացիական պատասխանողը, իսկ օրենքը պահանջում է, որ հայցադիմումի մեջ նշված լինեն ինչպես վնասի չափը, այնպես էլ այն, թե ում դեմ է հարուցվում հայցը և այլն: Հետևաբար նույնիսկ ցանկության դեպքում հնարավոր չէ հայցադիմում կազմել օրենքի պահանջներին համապատասխան: Սրանք հանգամանքներ են, որոնք «ստիպում են» դատական պրակտիկային զարգանալ այլ ուղղությամբ:

Ելնելով վերոնշյալից՝ կարծում ենք՝ անհրաժեշտ է հարցի լուծման պարզեցված և միաժամանակ արդյունավետ մեխանիզմ, որն առավելագույնս կբավարարի վնաս կրած անձանց գույքային իրավունքների և շահերի պաշտպանության պահանջմունքները:

---

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, թիվ ՀՅԸԲԳ- 2/0150/1/08 քրեական գործը դատարանների արխիվում:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն, իր 1985 թվականի հունիսի 28-ի «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» R (85) 11 հանձարարականում անդրադառնալով տուժողին պատճառված վնասի հատուցման հիմնահարցին, նշում է՝ **քրեական դատարանը պետք է հնարավորություն ունենա հանցագործի հաշվին տուժողին պատճառված վնասի հատուցման մասին որոշում կայացնելու: Այդ նպատակով անհրաժեշտ է վերացնել առկա սահմանափակումները կամ տեխնիկական խոչընդոտները, որոնք սահմանափակում են այդ հնարավորությունը:**

Կասկած չի հարուցում, որ հայցադիմումի պարտադիր պահանջը առանց որևէ բացառության, որը սահմանված է ներկայումս, և հայց հարուցելու իրավակիրառական պրակտիկան վկայում են այն մասին, որ այն տեխնիկական խոչընդոտ է, որը սահմանափակում է վնաս կրած անձանց գույքային իրավունքների և շահերի պաշտպանության իրականացումը:

Ե. Ա. Ջոլտոյաննշում է, որ հայցը կարող է ներկայացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Ընդ որում, հիմնավորում է, որ եթե գրավոր ներկայացված հայցադիմումը չի համապատասխանում օրենքի (խոսքը քաղաքացիական դատավարության օրենսգրքի մասին է) պահանջներին, ապա վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի անձի հայցը չքննարկելու: Ավելին, ըստ հեղինակի՝ քննության սկզբնական փուլում հայցադիմումը կարող է և հստակ նշում չունենալ պատասխանողի և վնասի չափի մասին<sup>1</sup>: Իհարկե, քննիչը իրավունք ունի քաղաքացիական հայցվորին առաջարկելու վերացնել թերությունները և ներկայացնելու նոր հայցադիմում՝ որպես առաջինի լրացում: Դրանում արտահայտվում է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առանձնահատկությունը՝ ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որում եթե հայցադիմումի մեջ նշված չեն պատասխանողը և հայցի գինը, ապա հայցը թողնվում է առանց քննության: Եթե հայցը հարուցվել է բանավոր, ապա այն պետք է ամրագրել քննչական գործողության արձանագրության մեջ կամ առանձին արձանագրությամբ: Քրեական դատավարությունում հայցի ներկայացման ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևի օգտագործումն ամեն տեսակետից ընդունելի է.

---

<sup>1</sup> St'u Золотая Е. А., Исковой способ защиты имущественных прав лиц, нарушенных преступлением: дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 2006, էջ 130-134:

դրանցից որևէ մեկին առաջնայնություն տալը նշանակում է վնասել դատավարության արագությանը և գույքային իրավունքների պաշտպանության արդյունավետությանը: Այս մոտեցումները ժամանակին հիմնավորում էին նաև Ա. Գ. Մազալովը<sup>1</sup>, Վ. Ս. Շադրինը<sup>2</sup>, Վ. Վ. Բատուևը<sup>3</sup> և այլք:

Ս. Վ. Կրավցովայի կարծիքով, սկզբնական փուլում, երբ հստակ պարզված չեն հանցագործություն կատարած անձը և վնասի չափը, հայց հարուցելու հարցը պետք է լուծել, եթե անգամ այն չի համապատասխանում օրենքի պահանջներին (առանց պատասխանողի և վնասի չափի մասին նշման): Դա հնարավորություն կտա քաղաքացիական հայցվորին քրեական դատավարություն վաղաժամ ներգրավվելուն, որն ակտիվորեն կնպաստի քաղաքացիական հայցի մատվ ապացույցներ հավաքելուն: Այդ պահից քննիչը իրավունք կունենա քրեական դատավարություն ներգրավել քաղաքացիական պատասխանողին: Բացի այդ, մեղադրյալը և պաշտպանը, տիրապետելով հայցվորի նյութական պահանջներին, կարող են նախաքննության փուլում օգտագործել իրենց իրավունքները հայցից պաշտպանվելու համար: Անձինք, որոնք օրենքի ուժով կրում են գույքային պատասխանատվություն մեղադրյալի գործողությունների համար, նույնպես կարող են մտնել վարույթ և իրականացնել գույքային իրավունքների և շահերի պաշտպանության իրավունքները: Հետագա քննության ընթացքում հանցագործություն կատարած անձը և վնասի չափը պարզելու դեպքում (սակայն մինչև նախաքննության ավարտը) նպատակահարմար կլինի հայցադիմումը վերակազմել օրենքին համապատասխան: Սովորաբար Նախաքննությունն ավարտելու պահին հայտնի են լինում բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ են հայցադիմումը ձևակերպելու համար: Ընդ որում, հայցադիմումի առաջին տարբերակը պետք է մնա քրեական գործում<sup>4</sup>:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց հարուցելու ձևի վերաբերյալ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև ԱՊՀ որոշ երկրների փորձը:

---

<sup>1</sup> Տե՛ս Մազալով Ա.Գ., Гражданский иск в уголовном процессе. Изд. 2-е, М., 1977, էջ 92-93:

<sup>2</sup> Տե՛ս Шадрин В. С., Обеспечение прав личности при расследовании преступлений. М., 2000, էջ 185:

<sup>3</sup> Տե՛ս Батуев В. В., նշված աշխատությունը, էջ 117-119:

<sup>4</sup> Տե՛ս Кравцова С. В., նշված աշխատությունը, էջ 48-50:

Ղազախստանի քր. դատ. օր.-ի 163-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում հայցը հարուցվում է գրավոր, ուրում պետք է նշվեն, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև խնդրանք կոնկրետ գումարի կամ գույքի բռնագրավման մասին: Նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ քաղաքացիական հայցի հիմքը և չափը ճշգրտելու անհրաժեշտությունից ելնելով՝ անձը իրավունք ունի ներկայացնելու լրացուցիչ հայց: Համաձայն նույն հոդվածի 4-րդ մասի՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի անհայտ լինելը չի խոչընդոտում քրեական գործում հայց հարուցելուն:

Բելառուսի քր. դատ. օր.-ի 149-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական հայցը կարող է հարուցվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևով: Բանավոր հայցը մտցվում է համապատասխան գործողության արձանագրության մեջ:

Այսպես է սահմանում նաև Ռուբենկստանի քր. դատ. օր.-ի 276-րդ հոդվածը:

Ի տարբերություն Ղազախստանի քր. դատ. օր.-ի՝ Բելառուսի քր. դատ. օր.-ի 149-րդ հոդվածի 4-րդ մասում խոսվում է այն մասին, որ մեղադրյալի անհայտ լինելը չի խոչընդոտում հայցվոր ճանաչելուն, այլ ոչ թե հայց հարուցելուն: Այս մոտեցումը առավել ճիշտ է թվում, քանի որ հայցը հարուցվում է մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի դեմ, ուստի եթե մեղադրյալը հայտնի չէ, ապա հայց չի կարող հարուցվել: Սակայն մեղադրյալի բացակայությունը չի խոչընդոտում, որ անձը ճանաչվի հայցվոր, քանի որ անձը դրանով դառնում է դատավարության սուբյեկտ: Այս հակասական մոտեցումը նույնպես հետևանք է հայցի հայեցակարգի, քանի որ միացյալ վարույթի դեպքում առանց հայցի հասցեատիրոջ չի կարող լինել հայց, մինչդեռ օրգականական ամբողջականության հայեցակարգը հայցով պատասխանողի պարտադիր պահանջ չունի և չի կարող ունենալ: Նա հայցը դիտում է գործի մաս, որը գործում հայտնվում է նաև հանցագործության մասին հաղորդման հետ միաժամանակ, մինչդեռ միացյալ վարույթը պարտադիր է համարում հարուցված քրեական գործի առկայությունը:

Ինչևէ, կարող ենք հավաստել, որ ի տարբերություն քաղաքացիական դատավարության, քրեական դատավարությունում հայց հարուցելը ունի առանձնահատկություն:

Կարծում ենք՝ բանավոր պահանջը որպես հայց հարուցել ընդունելը, առանց հետազայում դատարանին գրավոր ներկայացնելու պայմանի, համարվում է «հայց հարուցելու» ինստիտուտի ծայրահեղ պարզեցվածություն: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ բանավոր հայցը պետք է ամրագրել հանցագործությունների մասին հաղորդումներին բնորոշ ձևով կամ քննչական գործողության արձանագրության մեջ, ապա դա չի դիմանում քննադատության, քանի որ չի համապատասխանում հայցի ինստիտուտի իրավաբանական «մաքրությանը»: Ավելին, այդ դեպքում քննչական գործողության արձանագրությունը չի կարող դիտվել որպես դատարանին կամ պատասխանողին ուղղված պահանջ. դա ընդամենը կարող է գնահատվել որպես հայցվոր ճանաչելու՝ քննիչին ուղղված խնդրանք: Ընդունելի համարելով այն մոտեցումը, որ հայցը պետք է կազմվի գրավոր, որ նախաքննության ավարտին անհրաժեշտ է հայցադիմումը վերակազմել օրենքի պահանջներին համապատասխան, չենք կարող համաձայնել այն մոտեցման հետ, որ հայցադիմումը պետք է վերակազմի հայցվորը: Այս նկատառումներով պայմանավորված՝ անընդունելի է նաև Ղազախստանի քր. դատ. օր.-ի այն մոտեցումը, որ հայցվորը կարող է ճշգրտող հայց հարուցել:

Ինչպես նշեցինք վերևում, հայցադիմումն օրենքին համապատասխան կազմելու համար անհրաժեշտ են որոշակի իրավաբանական գիտելիքներ, իսկ հայցվորների համար բավականին դժվար է կազմել հայցադիմում՝ օրենքի պահանջներին համապատասխան: Բացի այդ, հայցվորն արդեն իսկ պահանջել է վնասի հատուցում, ինչը նշանակում է, որ նա իրացրել է իր իրավունքը, ուստի տրամաբանական չէ նրանից կրկին պահանջել ներկայացնելու հայց կամ սպասել, որ վերջինս ներկայացնի ճշգրտող հայց: Դրա համար ընդունելի է թվում այն մոտեցումը, որ սկզբնական հայցը կարող է չհամապատասխանել օրենքի պահանջներին. այն կարող է լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր, քանի որ այդ փուլում հայց հարուցելու նպատակը հայցվոր ճանաչելու հարցի լուծումն է, դրանից հետո՝ քննության ավարտին, քննության արդյունքերի և հայցվորի պահանջներին համապատասխան՝ քննիչը պետք է կազմի հայցադիմումը՝ որպես մեղադրական եզրակացության հավելված<sup>1</sup>: Նկատենք, որ այս մոտեցման իրավական հիմքը գործող քր. դատ. օր.-ում առկա է: Խոսքը, մասնավորապես, քր. դատ. օր.-ի 271-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն դրույթի մասին է, որ մեղադրական եզրա-

<sup>1</sup> Стів Дык А. Г., *նշված աշխատությունը*, էջ 108:

կացութեանը կցվում են (...) քաղաքացիական հայրը և գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու համար ձեռնարկված միջոցների (...) մասին քննիչի տեղեկանքները: Այս մոտեցման ճշմարտացիությունը հիմնավորվում է նաև իրավակիրառ պրակտիկայով: Քննիչների շրջանում անցկացված հարցումները ցույց տվեցին, որ անձանց կողմից հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին բանավոր պահանջ ներկայացվելու դեպքում քննիչներն առաջարկում են ներկայացնել գրավոր դիմում, որը, որպես կանոն, կազմվում է քննիչի աշխատասենյակում և հենց քննիչի թելադրանքով: Լինում են նաև դեպքեր, երբ քննիչներն իրենք են կազմում դիմումը՝ այնուհետև այն ստորագրել են տալիս անձին: Այսինքն՝ հայց հարուցելու առաջարկված տարբերակը, փաստորեն, դատական պրակտիկայի օրինականացումն է:

Հարկ է նկատել, որ հայց ներկայացնելու վերաբերյալ այսպիսի պատկերացումներն ուղղակիորեն բխում են նաև միջազգային իրավական ակտերի պահանջներից, մասնավորապես՝ **ԵՆՆԿ 1985** թվականի հունիսի 28-ի «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» **R (85) 11 հանձնարարականից**, որի 4-րդ կետի համաձայն՝ մեղադրական մարմինների յուրաքանչյուր զեկույցում ոստիկանությունը պետք է կատարի հնարավորինս հստակ և լրիվ նշում տուժողին պատճառված վնասների ու կորուստների մասին: Ըստ 12-րդ կետի՝ տուժողին պատճառված վնասների և կորուստների մասին համապատասխան ամբողջական տեղեկատվությունը պետք է ներկայացվի դատարան, որպեսզի նա կարողանա դա հաշվի առնի պատժի տեսակը և չափը որոշելիս:

Անկախ այն բանից՝ տուժողը հայց ներկայացրե՞լ է, թե՞ ոչ, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վնասի բնույթի և չափի մասին հստակ նշում անել մեղադրական եզրակացության մեջ. ավելով այս հանգամանքից՝ որևէ խոչընդոտ չի կարող լինել նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից հայցադիմում կազմելու համար:

Այսպիսով, վերոնշյալ դատողություններից պարզ է դառնում, որ քրեական դատավարությունում հայց հարուցելն ունի առանձնահատկություն:

*Մինչդրատական վարույթում հանցագործությունից վնաս կրած անձը վարույթն իրականացնող մարմիններին դիմում է հայցվոր ճանաչելու խնդրանքով: Դա կարող է լինել ինչպես բանավոր, որը մտցվում է համապատասխան գործողության արձանագրության մեջ, այնպես էլ գրավոր՝ հայցադիմումի կամ սովորական դիմումի ձևով: Այդ փուլում կարող են պարզ չլինել ինչպես վնասի չափը, այնպես էլ հայցով պատասխանողը:*

*Քննության արդյունքներով և ներկայացված պահանջների հաշվառմամբ՝ քննիչը օրենքին համապատասխան կազմում է հայցադիմում: Հետագայում՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու ժամանակ, այդ հայցադիմումը ներկայացվում է հայցվորին ստորագրման և կցվում է մեղադրական եզրակացությանը՝ որպես հավելված:*

*Հայցը դատարան ներկայացվելու դեպքում պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին, հակառակ դեպքում դատարանը կարող է վերադարձնել հայցադիմումը այն ներկայացրած անձին՝ քերտությունները վերացնելու և կրկին ներկայացնելու համար: Թերությունները վերացվելու և եռօրյա ժամկետում կրկին ներկայացվելու դեպքում հայցը ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը:*

**Sergey Marabyan**

*Post graduate researcher at the Chair of Criminal Procedure  
and Criminalistics, YSU*

*Adviser for the Chairman of the Court of Cassation of the RA*

## **PROCEDURAL PROBLEMS OF LODGING CIVIL CLAIMS IN THE CRIMINAL PROCEDURE OF THE RA**

**(LEGAL ANALYSIS OF LEGISLATION AND JUDICIAL PRACTICE)**

Given article refers the procedural problems when lodging civil claims in RA criminal proceedings, especially

- a) when it is possible to lodge a civil claim in criminal proceedings,
- b) what we must understand saying civil claim in criminal proceedings,
- c) how, in which ways it is possible to lodge a civil claim in criminal proceedings.

The author analyzing the legislation, judicial practice has come to an end that there are many legislative gaps and problems which results not real protection of the rights of victims.

In this article the author offers legislative changes on institution of lodging civil claims in RA criminal proceedings taking into account international legal acts and comparing criminal proceedings legislation in CIS states.